



## ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓՈՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Հոկտեմբերի 7-ին՝ կիրակի օր, ժամը 3-ին,  
Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհուրդը,  
Վեհափառ Հայրապետի գահակալության  
սուաշին տարեղարձի առթիվ, Վեհարանի  
մեղանատան մեջ կազմակերպել էր պաշտո-  
նական ընդունելություն, որին ներկա էին  
գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տեր-  
տերյանը, Հարավային Սմբերիկայի Հայ-  
րապետական պատվիրակ և Գերագոյն Հո-  
գևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Միռն  
արքեպիսկոպոս Մանուկյանը, Մեծի Տանն  
Կիլիկիո Կաթողիկոսության միարան քարձ-  
րապատիվ Տ. Շահն վարդապետ Աճեմյանը,  
Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամները,  
Մայր Աթոռի միարանությունը, թեմակալ  
առաջնորդ սրբազններն ու առաջնորդական  
փոխանորդները, Հոգևոր Ճեմարանի դասա-  
խոսական կազմը, «Էջմիածին» ամսագրի  
խմբագրական կազմը, Վերստուգիչ Հանձնա-  
ժողովի անդամները, վանքի պաշտոնեու-  
թյունը:

Հրավիրյալների թվումն էին Հայկական  
ՍՍԾ Մինիստրների Սովետին կից Հայ Եկե-  
ղեցու գործերի խորհրդի նախագահ՝ պ. Հ.  
Գրիգորյանը իր տիկնոց և Խորհրդի անդամ-  
ների հետ, Վարպետք՝ Ավետիք Խաչակյա-  
նը, ակադեմիկոս նկարիչ Մարտիրոս Սար-  
յանը, սիրված բանաստեղծութիւն Սիրվա Կա-  
պուտիկյանը, պրոֆ. Ա. Արքահամյանը,  
ճարտարապետ Մազմանյանը, քանդակա-  
գործ Նիկոլոս Նիկոլոսյանը և ուրիշ Հրա-  
վիրյալներ:

Հայրենիքի բարիքներով ճոխորեն դար-  
դարված սեղանների շուրջ, Մայր Աթոռը  
խանդավառ մթնոլորտի մեջ տղում էր իր  
սիրելի Հայրապետի և Հոր գահակալության  
առաջին երջանիկ տարեղարձը:

Վեհափառ Հայրապետի Տերունական ա-  
ղոթքով բացվեց ճանդիսավոր ճաշկերույթը:  
Տոնական ուրախ և խանդավառ տրամա-  
դրություն էր ստեղծվել սեղանների շուրջ,  
ուր մի անգամ ևս արտահայտվում էր Հայ  
ժողովրդի սրտառուց միասնությունը, սերն  
ու հարգանքը Ա. Էջմիածնի և նրա արժան-  
ընտիր Գահակալի շուրջ:

Վեհափառ Հայրապետի գահակալության  
տարեղարձի առթիվ այս պաշտոնական ըն-  
դումնելության ներկաներից շատերը շնորհա-  
վորության, բարեմաղթության սրտագին  
խոսքեր ասացին՝ եկեղեցափրական և հայ-  
րենասիրական վառ արտահայտություննե-  
րով:

Գերաշնորհ Տ. Սահմակ եպիսկոպոս Տեր-  
չովինանիսյանը, խոսելով Ա. Էջմիածնի  
միարանության անունից, ասաց.

Վեհափառ Տե՛ր.

Այսօր Հայ Եկեղեցին և Հայ ժողովուրդը  
մեծ խանդավառությամբ տոնում են Զերք Ա.  
Օծության գահակալության տուածին տարե-  
դրածը:

Մի տարօք Զերք գործունեությունը մեկ  
համոզեց, որ բնավորությամբ քաղցր, աշ-  
խույժ ու կրակոտ եք, աշխատանքի ծարավի,  
նեղություններից շխուսափող, Հայ Եկեղեցու,  
Հայ ժողովրդի և Հայրենիքի սիրույն անձնը-  
վեր, ասացագիմության նախանձափանդիր,  
վշաբերին կարեկից, խոսքերով հմայիչ:

Զերք աշխատանքը բազմօգուտ է և բազմա-  
տեսակ, ու Գուրք, Վեհափառ Տե՛ր, կարող եք  
խղճի անկեղծ զոհունակությամբ պարձենալ,  
որ գիտեք Զերք ժամերը նվիրել այնպիսի աշ-  
խատանքների, որոնք մեծամեծ օգուտներ են  
բերում թի՛ Եկեղեցուն, թի՛ Ազգին և թի՛ Հայ-  
րենիքին:

Աստուծո ողորմությամբ, Հայ Ազգը Զեկ շանձնեց մեր Ակեղեցու նավը և Կոռք, որպես մի քաջ և հմատ նախավար, տանում եք այն, էուավորչի խաչվառը որպես սրբազն առաջնարդ ունենալով Զեկ:

Թուլլ տվե՛ր, մեր սիրելի և թանկապին Հայրապե՞տ, Մայր Աթոռի միաբանության կողմից շնորհավորել Զեր գահակառության առաջին տարեդարձը և մասդիել Զեկ երկար կյանք և առողջություն: Թո՞ւ Շերը արժանացնի մեկ երկար տարբներ և նեսնել Զեկ բազմած Հայրապետական Աթոռին և Զեր իմաստուն զեկավարությամբ պահեք, պահպանեք մեզ: Թո՞ւ Շերը իրականացնի Զեր բոլոր իրձերը և օրհնությամբ երգներ՝ «Միշտ անշարժ պահեն զեկու Հայկացնան»:

S. Եղիշե արքեպիսկոպոս Տեսուելյանի առաջ.

«Եռիրին Վեհափառության օծման և գահակալության տարեկացին ասիթով, բոլոր ժամանակները կերպան Իր անձին և մեկ տարբան կարձ ժամանակամիջոցի ընթացքին կատարած վերանորոգման և բարեկարգություններում: Ինչ որ եղած է ու ժամանականդ ինչ որ կծրագրի ընել, աղիկա միայն ուրախություն կրնա պատճառել բոլորին և բոլոր անոնց, որոնք հայու աշքերով կնային էցմիածնին և անոր վերակենդանության:

Ես, հանուն Սրբոց Հակոբյանց միաբանության, իմ սրտապին շնորհավորությունս կհայտնեմ Զերդ Վեհափառության, մազքելով, որ Տերը անսասան պահե Մայր Աթոռը և մեր բոլոր հույսերուն և երազներուն օրորանը եղող մեր սիրելի Հայրենիքը:

Խմբավին երգված «Որը որ բացվին» Հայրենական երգից հնու խոսք առաջ բարձրապատիվ S. Ենին Վարդապետ Անեմյանը.

«Վեհափառ Տեր, որբազան հայրեր և հարդիկ՝ սեղանակիցներ.

Ներողամիտ եղեք, որ իմ խոսքը ոչ այնքան պաշտոնական խոսքը պիտի ըլլա մեր Աթոռին, որուն պաշտոնական անձի ներկայությունը պիտի ուզեի տեսնել այս պահուստ այստեղ, բայու համար այն խոսքերը, որոնք մեր սրտերուն մոտիկ են: Որպես Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան կհամարձակիմ խոսիլ, և իմ խոսքին մեջ ենսեք Կիլիկիո միաբանության խոսքը:

Մեկ տարի առաջ, Զեր օծման ժամանակ լսելով ձայնափյուռն, մենք էցմիածնը հնուին տեսանք և ան երազային էր մեզ համար: Զեր այցելությունը և ներկայությունը Անթիւմա՝ մեր միաբանությունը կապեց էցմիածնի հետ տարբեր կապերով: Մեր միաբանության մուլ կենդանացավ: Զեր անոնք եղավ սրտի

ճամբով ստեղծված կապ մը մեր և էցմիածնի միջև Մենք շենք կրնար չհիշել, որ Զեր ներկայությունը ստեղծեց միություն մը, որոնք կեղունը Զեր անձը կտանիքը և մեր մազթանիքն է, որ ստեղծված միությունը ըլլա անխախտ և մշտական, վերահաստատելու համար խախտված սերն ու համերաշխատ թյունը: Անթիւմասի գրությունը ողբերգական է: Մենք կերպանը դեպի բաժանում: Մարմնի մեկ անդամը զավերով, մարմինը կթունա և պետք է պատավիլ այդ հրվանդու անդամնեն մյուս անդամները առաջ զավերով առաջ պահելու համար: Եթե կը լրացնեմ Զեր հակագդեցությունը, մեր մարմինը կը դարձնի զարդար կը դարձնի Զեզը կապասենք սպիտացներու մեր ցավը, որպեսզի մեր նկազմցին մնա մի և հնակի իր Հովվապետին շարանակելու միջունը: Տովմականին շարանակելու միջունը:

Կներեք, որ Զեր ուրախ սեղանին բերի ցավու խնդիր մը: Հուսով ենք, որ Գորք կընեք Զեր կարելին՝ շատափույթ կերպով սպիտացնելու Հայ Եկեղեցին սպառնացող անշատման ցափառ խնդիրը, մնալով միշտ Հայաստանյաց Եկեղեցին մնա մի և հնակի իր Հովվապետին շարանակելու միջունը:

Քնդհանուր խանդավառության և ծափերի մեջ խոսք առավ Վարդապետ:

«Ես հառափու չեմ, բայց ևս էլ պիտի փորձեմ մի քանի խոսք առավ:

Ես ինձ շատ երշանիկ եմ զգում այս պահին, որ գոնվում եմ Աթոռուն կաթողիկոսի շինած այս հին գահինում: Այսօր այստեղ հավաքիլ ենք կատարելու մեր շատ սիրելի Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Վազգեն Ա-ի գահակալության տարեդարձը: Ես մոտիկից հնուում էի Վեհափառի կյանքին և գործունեությանը: Նա անկեղծ մարդ է իր հավատի և հայրենասիրության մեջ: Նա մեր ժամանակի լավ մարդկանցից մեկն է:

Հայ ժողովուրդը սիրում է էցմիածնիը: Եթե նրա մաշկը բռնես, էցմիածնին դուրս կգա: Հայ ժողովուրդը իր պետականությունը կորցնելով, Հայ Եկեղեցու մեջ գտավ իր ազգային զգացմունքների հանրագումարը: Միտքս է զալիս մեր սիրելի բանաստեղծ Վահան Թերեցանը, որը Հայկական Եկեղեցին լավ է պատկերել իր Եկեղեցին Հայկական բանաստեղծության մեջ: Էցմիածնը շանթարդել է եղած Հայ ժողովուրդի համար:

Լոթի Հայ ժողովուրդը հասել է մեր օրերը, այդ շնորհիվ էցմիածնին է: Հայ ժողովուրդը երկու զորավիր է ունեցել՝ մեկը էցմիածնին է, մյուսը՝ ժողովրդական ազատագրական իդեալը:

Վեհափառ, ցանկանում եմ Զեկ էցմիածնը կենդանացավ: Զեր անոնք եղավ սրտի

Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից Վեհափառ Հայրապետին ողջունեց Խորհրդի անդամ պ. Ա. Տիրացյանը.

Վեհափառ Տե՛ր.

Գերագույն Հոգևոր Խորհրդի աշխարհական անդամների կողմից ողջունում եմ Զեր գանձակալության տարեղարձը: Մեզ Համար ուրախություն և պատիվ է Զեզ Հնատ միասին աշխատել Հայ Եկեղեցու կազմակերպության համար: Զեր նվիրվածությունը Հայ Ազգի հանդեպ ես ճանաչում եմ վաղուց, մեր ու-

Մայր Աթոռի երեց և երիտասարդ միաբանները, որոնք պաշտոնավարում են մեր ներքին թեմերում, Հանուն իրենց թեմերի կազմակերպությունների և ժողովրդի, ողջունեցին Վեհափառ Հայրապետի գահակալության տարեղարձը:

Դերաշնորհ Տ. Կարգան եպիսկոպոսը՝ Հանուն վրահայոց թեմի և թեմական-Եկեղեցական կազմակերպությունների ու ժողովրդի, և բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը՝ Հանուն Շիրակի թեմի,



ՎԵՀԱՓԱՐ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀՆԱՏ Ե ԱՍՈՒՄ

սուցչական աշխատանքների տարիներից: Մի տարի ովկորությամբ Հնատնեցինք Զեր գործունեության: Զեր Երդման խոսքը զրոշմած է մեր սրտերում և Դուք իսկապես ծառայում եք Հայ Եկեղեցուն և ժողովրդին:

Վեհափառ Տե՛ր, Եջմիածնի նյութական, բարոյական, մտավոր զարգացումը Զեր ուշադրության կենտրոնումն է և Դուք լավագույն առաջնորդն եք այդ հարցերում:

Գերագույն Հոգևոր Խորհրդը ցանկանում է երկար կյանք Զերդ Վեհափառությանը և մենք պատրաստ ենք Զեր կողքին կանգնելու էջմիածնի տերն ու տիրականը Դուք եք, մենք Զեր խորհրդականներն ենք:

Խմում եմ Զերդ Վեհափառության կինացք:

Արտադին խոսքերով ողջունեցին Վեհափառ Հայրապետի գահակալության տարեղարձը:

Հոգեշնորհ Տ. Հայրիկ Վարդապետ Ավետիսյանը, Հանուն նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմի, ասաց.

Վեհափառ Տե՛ր.

Այսօր Հայտատանյաց Առաքելական Ս. Եկեղեցին, Համայն Հայ Հավատացյալ ժողովուրդը, սրտի անհուն ցնծությամբ ու հրաժարականքով, նշանավորում են թանկագին Վեհափառությանդ ընտրության և սուրբ օծման առաջին տարեղարձը:

Հայ ժողովուրդը առիթ ունեցավ մեկ տարվա մեջ Համոզվելու իր արժանավորագույն և երջանիկ ընտրության մեջ: Վեհափառ Տե՛ր, Դուք կարողացաք նվաճել Հաղարավոր ու

Հավարավոր հայ սրտեր, որոնցից այժմ վարար գետի նման երախտավիտական, շնորհավորական և բավական բարեմաղթությունն սերի անկեղծ և չիրմաշունչ խոսքեր են հոսում զետի ջեպ:

Հարգարժան հուրերը այսակ զեղեցիկ ձառնով ծանրացան Զեր մեկ տարվա արդյունաշատ դորձունեռության վրա: Երախտավիտական և շնորհավորական չերմ խոսքեր ունենք ասելու նաև մենք՝ Զեր շուրջ համախմբված երիտասարդ միարաններս: Մեր հոգիների ու սրտերի մեջ սփուրով Զեր անձից ժառանգված լույսն ու չերմաթյունը, կարողացաք մեզ խանդավանել ու սպեշնչել Զեր անձական օրինակով:

Այս մեկ տարվա կարևորագույն բրագարձություններից պետք է համարել Զեր հովապետական այցելությունը Սփյուռքում:

Զեր նախագահությամբ Կահիբեում կայացած եպիսկոպոսական ժողովի չափազանց կարերը պատմական որոշումների նոր ուրախության ու հավատի զգացմունքներով լցրին բոլոր հայ հավատացյանների սրտերը: Թույլ տվեր ինձ, հանուն Աթոսի երիտասարդ միարանների, շնորհակալություն հայուննել եպիսկոպոսական ժողովին մասնակցող բոլոր եպիսկոպոսներին, որոնք աննկուն գինակիցների նման համախմբվելով Զերդ Վեհափառության շուրջը, ցուցաբերեցին լիակատար համախմբություն՝ ի շահ Հայ եկեղեցու և ի փառ հայ ժողովրդի:

Վեհափառ Տե՛ր, մեծագույն պատասխանատվությամբ և երկյուղածությամբ ստանձնելով լուսավորչի հովապետական սուրբ դավագանը, աշխատում եք աշքի լույսի պես պահել ու պահպանել այն ամենը, ինչ լավագույն ժառանգություն է մնացել մեր փառագարդ անցյալից, մեր սուրբ և խնկելի նախնիքներից: Ի ծագս աշխարհի սփոված Հայ եկեղեցու և հայ ժողովրդի բեկորները հոգեպես միշտ ամբողջ ու միարիտա պահելը եղել է մնում է Զեր միշտ իդան ու մատածումը:

Այսօր ոմանք ճգնում են ճեղքել Հայ եկեղեցու միասնության պարիսպը, սևայ խրել հազարավոր թելերով շաղկապված բնաշխարհի և Սփյուռքի հայության սերտ միության միշտ:

Սակայն առաջին անգամը չէ, որ մեր եկեղեցին դիմադրավում է նման փորձությունները: Դարերի ալիքները զարնվել են մեր եկեղեցու աղամանդյա ապառաժին ու միշտ փշրվել:

Վեհափառ Հայեր, թույլ տվեր նոր-նախախշեանին և Հյուսիսային Կովկասի հայոց միացյալ հոգերոր թեմի առանորդ բարձրապատճել Տ. Գարեգին ծայրագույն վարդապետի, թեմական խորհրդի, բահանաների և ավելի քան

70.000 հայ հավատացյալ ժողովրդի անունից սրագինս շնորհավորել Զեր զահակալության փառավոր տարեղարձը և հայցել Ամենարարձյալից բաշառողջություն, արեշատաւթյուն և պատգամական դործունենություն՝ փփառ Հայ եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի:

Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, Հանուն Ազրբյանի և Թուրքիանի թիմի, ասաց:

«Միբեկի Հայրապետ»:

Որպես միարանության կրտսերագույն անդամը, որպես Զեր որդիների մեջ Բնիքամինը, թեև ոչ այնքան սիրելի ինչքան հենց ինքը՝ Բնիքամինը, զարիս և՛ նավթաշխարհից Բաբրից, իմ ժողովրդի անունից, նրա հույզերի և զգացմունքների թարգմանը լինելու այս հանդիսավոր օրվա առթիվ:

Ակամացյալ Հիշում և՛ մի պատկեր Քրիստոսի և նրա առաքյալների կյանքից, որը նման է մեր կյանքին: Փոթորիկի պահն է զա: Քրիստոսի սիրելի առաքյալներից Պետրոսը, ալիքների և փոթորիկի մեջ, ստույդ փոնադի պահնին, հուանատված դրության մեջ, կարիք եր զգում մի ուժեղ ձայնի, և նա կանչում էք. «Տե՛ր, քրիկ' բ մեզ» եղավ ժամանակ, որ մենք էլ առաքրալների նման հուսահատվեցինք, մենք էլ կարիքն ինքնը զգում մի զոր, ուժեղ ձայնի: Դուք եղաք, սիրելի Վեհափառն, այդ ձայնը մեզ համար: Մենք մեր տապանաների մեջ լսեցինք Զեր բաշաւերոց ձամնը, և Դուք ասացիք. «Թաշալերվեցի՛ք, և Զեր Հայրապետն եմ, մի՛ վհատվեք»:

Մենք դիտակցում ենք մեր պարտականության լրջությունը, ծանրությունը: Այս օրերին հայ հոգեկորականից պահնանցում է հոգեկան, բարոյական, իմացական պատրաստություն, զոհաբերության և նվիրման ոգի: Խոստանում ենք քառապատկել մեր ուժերը՝ լավագույն գործի համար:

Միբեյցյալ Հայրապետ, ցանկանում ենք Զեզ անսպառ եռանդ, որպեսզի իրականություն գառնան Զեր բարի ծրագրերը և խորհուրդները, ի շահ Հայ եկեղեցու, մեր Հայրենիքի և մեր ժողովրդի:

Մայր Աթոռի պաշտոնեռության անունից խոսք առավ անտեսա-ֆինանսական կառավարչության պետ պ. Հ. Սեղացյանը.

«Վեհափառ Տե՛ր»:

Ինձ առաջարկեց Մայր Աթոռի աշխարհական աշխատակիցների անունից բարեմաղթության խոսք ասել Զեր գահակալության առաջին տարեգարձի առթիվ:

Հայիվ ենք բոլորել այն մի տարին, երբ մեր երիտասարդ Ընտրյալը Ազգի կամքով իր ձեռքը վերցրեց Հայրապետական սուրբ գալագանը: Մի տարին արդյո՞ք մի հերք չէ

պատմության դարավոր ընթացքի մեջ։ Սակայն մի տարին բավական եղավ, որպեսզի մեր Հովհանքի տիրի մեր մտքերին, իշխի մեր Հոգիներին, կառավարի մեր սրտերը։

Մենք սիրեցինք Վեհին և անվերապահ նվիրվեցինք նրան, որովհետև նա իր ողջ էությամբ նվիրված է իր Հավատացյալ ժողովրդին, իր Հայրենիքին։

Մենք փարվեցինք Վեհին որովհետև նա շերմորեն սիրում է քարքարոտ Հայաստանը, որի ամեն մի քարդ նրա սարտին կ'ափի, որի ամեն մի քարից նրա սիրտը հուզվածներ կբաղի վսկ ու լուսացյալ։

Մենք սիրեցինք Վեհին և նրա ուժայալ հետևորդները զարձանք, որովհետև զգացինք և համոզվեցինք, որ նրա Համար ամենաարժեքավոր մարդը, ամենաապավավոր քաղաքացինքն աշխատանքի, քրտենիք մարդն է։

Մենք սիրեցինք Վեհին և երգումով Համայնքի զարձանք, որովհետև նրա շուրջը, որովհետև նրա լուսապայծած աշքերից խաղաղությունն էր ճառապայման և նրա ազնիվ Հոգին ու միտքը նվիրված են ժողովուրդների եղայրության և խաղաղության սրբազն գործին։

Թողարք էլ տեսնում ենք շինարարական այն աշխատանքները, որոնք սկսվեցին Վեհի նախաձեռնությամբ և ևս համոզված եմ, առաջ են դնալու հարածուն թափով։ Չի անցնի երկար ժամանակ և կիրակենդանանան մեր քաշակերտ տաճարները, մեր Հոյաշեն եկեղեցիները, հայու կենսասլաց մտքի, անմար փառքի Հոյակապ կոթողներն իրենց անկըրկնելի գեղեցիությամբ, հայկական ճարտարապետական արվեստի հմայիչ գույներով։ Կրանցում նորից լսվելու են մեր սրբանշելի կրածտության Հոգիպարար մեղքիները։

Մեր իրաահս Հովհանքեար զեռ Հովհանքեարի կոչութը շատացած եկավ Հայաստան, տեսավ ուների զարթոնք, որ բուն և Հազմականորեն կծագալի, նոր թափ ու թոփչը տալով իր զավակների մտքին ու քաղկին։ Նա տեսավ Հոմնականք, տեսականք, հարազարար, տեսավ ու պատվամեց։ «Արտասահմանի հայերը միանգամ ընդիշտ պետք է լավ գիտնան, թե միայն Սովետական իշխանությունն ու միայն ուսւ ժողովուրդն են զերագույն զրագականները մեր Ազգի կենդանության, մեր Հայրենիքի վերաշինության և խաղաղ առաջդիմության, հայ ժողովրդի ոսկե ապագայի իրականացման։ Եվ ապա՝ «Կա մեկ հայ ժողովուրդ, կա մեկ հայ Հայրենիք, կա մեկ կամեցողություն և պայքարի մեկ զրոց։ Մեր բոլոր ճանապարհները զեպի երեան կտանին, դեպի մեր Սովետական Մայր Հայաստանի ծաղիկ մայրաքաղաք։ Ավելի զարգացնելով այս միտքը, մեծ Հովհանքեարը շարունակում է։ «Կա մեկ սիրու,

կա մեկ հողի, մեկ ժողովուրդ, մեկ աշխատանքի ճակատ, պայքարի մեկ դրոշ, հանուն Հայրենիքի վերաշինության, հանուն Սովետական մեծ Հայրենիքի կառուցման ու զորացման, հանուն Համայն աշխատական վերջանիքան ու ժողովուրդներու եղայրության։ Եվ այս դրոշը բարձր պահած էր մեր ամուռ ձեռքերում, առաջ է ընթանում մեր աննման Կաթողիկոսը։

Թառերի աննշան փոփոխությամբ Զեր մասին պիտի ասել այն, ինչ Գուք զրել եք երջանկահշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի մասին։ «Հայ ժողովուրդը անհաշում է իր հարազատ Հովհանքեարին, որը կանգնած է այսօր մեր Ազգի ամենաթանկագին իդեալիստի կենսագործման ճանապարհի վրաւ Այդ ճանապարհն է հայ Հայրենիքի վերաշինության, Հայ եկեղեցու միասնականության, Հայոց ազգային արդարի իդեալի իրականացման, Հայրենագարձի, ինչպիս և Համայն աշխատական իսապատման։ Մեր Հայրենանվեր Վեհափառ Հայրապետը աննկուն կերպով կանգնած է հայ ժողովուրդի կողքին, Հայրենի պետության կողքին։

Մենք ընդմիջա փակել ենք մեր առապալից անցյալի սովերագական պատմությունը, որը զրված է մեր Հանճարեղ պատմիչների սրտի արյունով։ Մենք սկսել ենք մեր նոր սկելարի նոր պատմությունը և համոզված ենք, որ այդ լուսաշաղախ պատմության կենսաշունչ է շերի մեջ շողջողալու է Զեր անունը, զի համոզված ենք, որ Զեր զահկալության ժամանակաշրջանը լինելու է մեր սրբային իդեալի, զարավոր երազանք ների լիակատար իրականացման ժամանակաշրջան։

Այս համոզվությունը, թույլ տվեք մեր փոքրիկ կուսկատիմի անունից բացառանշել։

Թո՞ղ երկար ապրի, թո՞ղ Հավերժ ապրի մեր երիտասարդ, մեր իմաստուն, մեր պայծառ Հովհանքեար։ Թո՞ղ նրա երջանկության աղբյուրը լինի մեր մշատվարթ, մեր արևագավառ, մեր ծագկուն Հայաստանը, Սովետների հայր Միության իրավահավասար անգամը։

Պրոֆ. Ա. Արքանամյանը ևս, շնորհանդուր ով Վեհափառ Հայրապետին, ասաց։

Այստեղ հանդես եկան տարրեր բնագավառների և մասնագիտությունների մարդիկ և Վեհափառին զրվատեցին ամեն մեկն իր տեսանկյունով։ Մեկը նշեց Վեհափառի շինարարությունը, մյուսը՝ միարանության մեջ ստեղծած կարու ու կանոնը, մի երրորդը՝ Ռեմերում կատարած կազմակերպչական աշխատանքը և այլն։ Ես մասնագիտությամբ պատմաբառ եմ և ուզում եմ Վեհափառ։

զործունեությունը զնահատել պատմաբանի տեսանկյունով:

Իմ կարծիքով, երբ մենք ուզում ենք զնահատել մեր Վեհափառի միամյա զործունեությունը, պիտի շափանիշ բնդունենք ո՛չ թե նրա այս կամ այն սկսած ձեռնարկը, այլ մեր ազգային-եկեղեցական հրմանական բարձասնությունները, ո՞րքանով է մեր Վեհափառն օժտված մեր մեծագործ և ազգային-եկեղեցական պատմություն մեջ սյուն ստեղծող հայրապետների առաքինություններով:

Վեհափառի միամյա զործունեությունը, ինչպես և մեր նրա հետ ունեցած ծանոթությունը, մեզ բերել է հաստատ այն համոզման, որ նա զարգարված է մեր լավագույն հայրապետների երեք մեծագույն առաքինություններով. այդ հայրենասիրությունն է, ժառագրապատճենը և եկեղեցասիրությունը:

Եւդ առաքինությունների առաջին ցայտուն արտահայտությունն այն եղավ, որ նա երբ Ազգային-եկեղեցական ժողովի կողմից ընտրվեց Գահակալ, եկավ Մայր Աթոռ և սահնանեց այս վերին աստիճանի ծանր և պատասխանառու պաշտոնը:

Հավատարիմ մեր ականավոր հայրապետների, առանձնապես հանգուցյալ Գևորգ Զ Կաթողիկոսի որդիքրած հայրենասիրական ուղղության, մեր Վեհափառը սերա փոխհարաբերություն ստեղծեց Հայրենի կառավարության հետ: Եվ, վերջապես, նա Իր գահակալության կարճ ժամանակամիջոցում ցուցաբերեց Հայրական հոգատար վերաբերմունք արտասահմանի մեր տարապիք Հայության նկատմամբ և անձամբ մեկնեց արտասահման՝ ծանոթանալու իր համայնքների դրության հետ:

Ահա այս երեք առաքինությունների մեջ ենք մենք առնում Վեհափառի մեծությունը: Եւդ առաքինությունները նկատի ունենալով են կարծում եմ, որ այսօր Վեհափառական պատմությանը պատկան է այս բերելի կառավարության նկատմամբ: Դա անձին է. Գրիգորյանի, մեր սիրելի Վարպետը և արտասահմանի մեր հյուրերը՝ Հանձինս գերաշնորհ Եղիշե արքապիսկոպոսի, գերաշնորհ Միռն արքեպիսկոպոսի և Շողեշնորհ: Եահ վարդապետի:

Եվ այս երեք առաքինություններն են, որ մեզ հույս են ներշնչում, որ Վեհափառը կկարողանա մեծագույն վարպետությամբ մեր եկեղեցական նավը առաջնորդել փոթորկությունի:

Թող ներվի ինձ, որ ևս իմ բաժականառ չպիտի վերջացնեմ ուրիշների նման Վեհափառին երկար կյանք ցանկանալու ստվորական բարեմաղթությունով. Վեհափառը երիտասարդ է և դա ինքնին հասկանալի է: Վե-

հափառը վերջերս ձեռնարկել է մի շարք ազգություն ողոծեր. ևս լավագույն հաշողություններ եմ ցանկանում նրան՝ Իր ոկտած մեղմաշան աշխատանիքներում:

Ավագիմիկոս նկարիչ Մ. Սարյանը իր ողայինի խոսքում ասաց.

«Ես մրցել չեմ կարող հարասասն բնկերների հետ, բայց ես ել ուզում եմ անպայման խոսել և իմ զգացմունքները արտահայտել այս հանգիստավոր ասիթով:»

Վեհափառը մեր կառուցող հայրապետներից է: Հայաստանում ահադին բանակությամբ հին կոթողներ կան, էջմիածնից սկսած մինչև ուշ դարերի կոթողներ Ինչպես հայ ժողովրդի զիմից, այնպես էլ մեր պատմական այդ կառուցվածքների փրայով անցել է ժամանակի ավերիչ ձեռքը, շատ բան վշացել է: Փետր է վերանորոգել, պիտր է վերակառուցել Հոփիսմեն, Գայանեն, Շողակաբը: Ես ցանկանում եմ, որ այդ կոթողները վերականգնվին ալխաս, ինչպես կան, առանց նրանց մեջ մացնելու էժանադին մաշակ, այլ վերակառուցվեն կլասիկ, հայկական խկական ոճով և երանգներով:

Ես եղել եմ Խոսիքա, վղիպտոս և այլուր, տեսել եմ ուշադիր վերաբերմունք Հնությունների նկատմամբ: Ես կցանկանայի, որ Գուր, Վեհափառ ո, Զեր Հնարավոր միջոցներով սկսեիր և անեիր այն, ինչ Զեղանից կամված է այդ կոթողների վերակառուցման համար:

Յանձնանում եմ Ձեզ առաջըություն, որ Գուր մեր օրերում զառնաք կառուցող, որ օտարներ տեսնելիս առնեն, «Ենչ մեծ ժողովորդ է եղել հայ ժողովուրդը:»

Ճարտարագետ Մազմանյանը իր ողջույնի խոսքում ծանրացավ հայ ժողովրդի շինարարական սեղծագործական կարողությունների վրա և ասաց.

«Հայ ժողովուրդը շինարար ժողովուրդ է: Նույնիսկ մեր ժողովրդական բանահյուսությունը տագորված է այդ շինարարարության ովով: Վերցնենք, օրինակ, ժողովրդական անսաւնիք-ն: Մեր տարապիք ժողովուրդը իր վշտերն է արտահայտում շինարարական պատկերներով. «Կոտրեր են գերաններ, խախտեր են աներ, բույն պիտի զնեն մեջ վայրի հավերքը: Հանրածանոթ «Միծնոնակ» բանաստեղծության մեջ ես տեսնում ենք նույն պատկերը: Միամանթոյի, Վարուժանի, Խաչակյանի, Զարենցի գործերում կան շինարարական պատկերներով հաղեցված բանաստեղծություններ: Ել չեմ խոսում մեր հայկապ ճարտարապետության մասին: Շինարարական այդ ողով վարպետական մեջ առել մեր կաթողիկոսները՝ Գրիգոր Խոսափորիչը, որը կանգնեցրեց էջմիածնի պատմա-

կան Տաճարը, Կոմիտաս Կաթողիկոսը՝ մեր ճարտարապետության դեղեցիկ նվաճումներից Հափփախմնան, Ներսէս Գ Եհնողը, որը կառուցեց Հվարթնոցը, որն իր նմանը չունի համայն աշխարհի ճարտարապետության մեջ:

Ես պետք է ասեմ, որ կարծ ժամանակաշրջանում մեր Վեհափառ Հայրապետը Հոփփախմնան, Շողակաթ, Գայանեն և մյուս վանքերի վերակառուցման գործում մեր ճարտարապետների մեջ ստեղծեց խորունկ հնատաքը բրություն և ջերմ սեր զեպի այդ ճարտարապետական կոթողները և մենք հաճույքով կատարում ենք վերակառուցման աշխատանքները:

Վեհափառ Հայրապետը ժամանում է արդարի մեր շինարար կաթողիկոսների շարքը: Ինչ եսանդով նա սկսել է, նոյն նոանդով էլ թող ավարափ իր շինարարական գործունեությունը, և նա պատմության մեջ կոթողի լուսավոր ու անմոռանալի հիշատակի:

Մայր Աթոռի պաշտոնաթիրթ «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի և ընթերցողների անոնից Վեհափառ Հայրապետին ողջունեց պ. Ա. Հատիւյանը, երկար կյանք և արդյունաշատ գործունեություն մաղթելով Վեհափառ Հայրապետին:

Վերստուիլշ Հանձնաժողովի անոնից խոսք առավ պ. Գ. Թեմելյանը և տսաց:

Վեհափառ Հայրապետ.

Զեր օժման առաջին տարեդարձի այս երջանիկ առիթով, Զեր թանկագին կյանքի համար բաժակ բարձրացնելը մեծ երշանկություն և պատիվ է նաև Վերստուիլի Հանձնաժողովի համար, որն ամեն չանք կոռծադրի, որպեսով անթերի ընթանան Մայր Աթոռի տնտեսական-եկեղեցական գործերը:

Լուսավորչակերտ Ս. Էջմիածինը հայ հոգու խորանն է, հայ հավատի վիմը, որի վրա անշեշ վառվում է հայու սիրո՞ կուսավորչի կանթեղը:

Գուրք, Վեհափառ Հայրապետ, մեծ Լուսարապետն եք այդ լուսի:

Թո՞ղ այդ լուսը ճառագի հավիտյան հրաշափառ Թո՞ղ այդ լուսը ջերմացնի հայ ժողովուրդն աշխարհասափիուր Թո՞ղ նրա շողե-

րը հասնեն նաև նրանց, որոնք պիտակցար, թե անդիտակցարար, արտասահմանի հայ ժողովուրդի մի մասը տաճում էն դնալի ահավոր աղետ:

Շատ են շողացել սրերը, շատ են որոտացել մրրիկները մեր երկրում, բայց մեր գլուխները միշտ բարձր ենք պահել, բանի որ մեր հայացքները միշտ հառել ենք մեր հոգու Տաճարին՝ Ս. Էջմիածնին: Այժմ նույնպես, կանցնեն բոլոր տեսակի քամիները, իսկ Էջմիածինը կմնա, ինչպես մեր հավիտենական Արարատը:

Պաշտոնական այս հաշկերույթին սիրված բանաստեղծումի Սիլվա Կապուտիկյանը խորունկ ապրումով և ներշնչումով արտասանեց իր բանաստեղծույթյուններից «Խոսք իմ որդուն»-ը և Արարատին նվիրված մի զեղեցիկ քերթված, արժանանալով բոլոր ներկաների շերմ ու սրտապին շնորհավորության:

Քարձագաղատիվ Տ. Կոմիտաս վարդապետը իր բաղցը ձայնով երգեց մի շարք երգեր: Դավիթ բեկի արիան՝ «Ո՞՛», իմ չքնաղ, սիրուն Հայրենիք»-ը արժանացավ շերմ ընդունելության, ստեղծելով Հայրենասիրական խանդավառ մինուրա սեղանի շորջը: Իսկ Տ. Մելքոն վարդապետ Անքարյանը (Փայլակ Միածն) կարդաց իր «Էջմիածին» խորագրով զեղեցիկ քերթվածը:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի զահակալության առաջին տարեդարձի առիթիվ տրված ընդունելություն-ճաշկերույթը անցավ վերին աստիճանի խանդավառ, ուրախ և շերմ մինուրատի մեջ:

Վերջում, ծափահարությունների տակ, խոսք առավ Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնեց իր զահակալության առաջին տարեդարձի առիթիվ հայտնված համազգային անկեղծ ու չերժապին զգացմունքների ու բարեմաղթությունների համար, օրնեկ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին, Հայրենի պետությունը և բովանդակ Ազգն Հայոց:

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով վերջացավ ընդունելությունը:

